ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
KOTAYK MARZ
MUNICIPALITY OF TSAKHKADZOR

2310 ք. Ծաղկաձոր Օրբելի Եղբ. 10 Tsakhkadzor city Orbeli Br.10
Հեռ.Tel.: (+374 223) 6-04-02, 6-04-03

*20 օգոստոս 2014թ.* **N 218**

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**
**ՊԱՐՈՆ Մ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գարեգինյան

Ձեզ եմ ներկայացնում Ծաղկաձոր համայնքի ավագանու 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ 65, 66-Ն, 67-Ն, 68 և 69-Ն որոշումները:

Առդիր՝ 6 էջ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատ.՝ Գարիկ Բադալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ Ու Մ

**15 օգոստոս 2014 թվականի թիվ 65**

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի ԹԻՎ 09 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ 09 հերթական նիստի օրակարգը:

1. Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 82-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2. Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2014թվականի հուլիսի 01-ի թիվ 60-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու մասին:

4. Ծաղկաձոր քաղաքի սեփականություն համարվող հողամասեր աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը սահմանելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 օգոստոս 2014 թվականի թիվ 66-Ն**

## ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 82-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 11-ի "Ծաղկաձորի քաղաքի 2014 թվականի բյուջեի հաստատման մասին" թիվ 82-Ն որոշման հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Տող1111 -Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար ,,48500.0 հազ.դրամը, փոխարինել 55500.0 հազ. դրամ":

2) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիրնգործադիրմարմիններ պետականկառավարում) հոդված 4112 (Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ) "500.0հազ. դրամը փոխարինել 900.0հազ. դրամ":

3) Բաժին 1 խումբ 1 դաս 3 (Արտաքին հարաբերություններ) հոդված 4222 (Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր) "1500.0հազ. դրամը փոխարինել 1900.0հազ. դրամ":

4) Բաժին 1 խումբ 3 դաս 3 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդված 4237 (Ներկայացուցչական ծախսեր) "0.0հազ. դրամը փոխարինել 500.0հազ. դրամ":

5) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (Ճանապարհային տրանսպորտ) հոդված 4215 (Ապահովագրական ծախսեր) "400.0հազ. դրամը փոխարինել 200.0հազ. դրամ":

6) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (Ճանապարհային տրանսպորտ) հոդված 4823 (Պարտադիր վճարներ) "450.0հազ. դրամը փոխարինել 250.0հազ. դրամ':'

7) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (Ճանապարհային տրանսպորտ) հոդված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) "40000.0հազ. դրամը փոխարինել 50000.0հազ. դրամ":

8) Բաժին 5 խումբ 1 դաս 1 (Աղբահանում) հոդված 4511 (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) "19503.2 հազ. դրամը փոխարինել 24203.2 հազ. դրամ":

9) Բաժին 6խումբ 3 դաս 1 (Ջրամատակարարում) հոդված 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) "0.0 հազ. դրամը փոխարինել 1000,0 հազ. դրամ":

10) Բաժին 6խումբ 4 դաս 1 (Փողոցների լուսավորում) հոդված 5134 (Նախագծահետազոտական ծախսեր) "700.0 հազ. դրամը փոխարինել 2000,0 հազ. դրամ":

11) Բաժին 6խումբ 6 դաս 1 (Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված 5129 (Այլ մեքենաներ և սարքավորումներ) "0.0 հազ. դրամը փոխարինել 4000,0 հազ. դրամ":

12) Բաժին 8 խումբ 1 դաս 1 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված 5129 (Այլ մեքենաներ և սարքավորումներ) "8000.0 հազ. դրամը փոխարինել 11000.0 հազ. դրամ":

13) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված 4216 (Գույքի և սարքավորումների վարձակալություն) "0.0 հազ. դրամը փոխարինել 350.0 հազ. դրամ":

14) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) "2160.0 հազ. դրամը փոխարինել 2260.0 հազ. դրամ":

15) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված 4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) "400.0 հազ. դրամը փոխարինել 1700.0 հազ. դրամ":

16) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված 5129 (Այլ մեքենաներ և սարքավորումներ) "0.0 հազ. դրամը փոխարինել 1000.0 հազ. դրամ":

17) Բաժին 9խումբ 5 դաս 1 (Արտադպրոցական դաստիարակություն) հոդված 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) "60429.0 հազ. դրամը փոխարինել 40129 ,0 հազ. դրամ":

18) Բաժին 11խումբ 1 դաս 2 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված 4891 (Պահուստային միջոցներ) " 1102.9 հազ. դրամը փոխարինել 752.9 հազ. դրամ":

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ

4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**Ո Ր Ո Շ Ու Մ**

---

**15 օգոստոս 2014 թվականի թիվ 67-Ն**

ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 01-Ի ԹԻՎ 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 5-րդ մասով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Ծաղկաձորի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 01-ի "Ծաղկաձոր քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 38-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին" թիվ 60-Ն որոշման վերնագրում "լրացումներ" բառը փոխարինել "փոփոխություն" բառով, նախաբանում "3-րդ" բառը, իսկ որոշման 1-ին կետում՝ "հավելվածում կատարել լրացումներ" բառերը հանել:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 օգոստոս 2014 թվականի թիվ 68**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 1.2 ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդի դիմումը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող,քաղաք Ծաղկաձոր,Վ.Հարությունյան փողոց թիվ 2/8 հասցեում գտնվող 0.15 հա մակերեսով հողամասը սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, հետագա շահագործման նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 օգոստոս 2014 թվականի թիվ 69-Ն**

## ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետերով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Օտարել աճուրդային կարգով համայնքային սեփականություն համավող հետևյալ հողամասերը՝

| Հողամասի հասցեն | Չափը | Նպատակային և գործառնական նշանակությունը | Կադաստրային ծածկագիր |
|---|---|---|---|
| ք.Ծաղկաձոր,Իսահակյան փակուղի թիվ 31 | 0.1 հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0021-0101 |
| ք.Ծաղկաձոր,Վ.Հարությունյան փողոց թիվ 2/2 | 0.011988հա | հատուկ պահպանվող, հանգստի համար | 07-005-0025-0062 |

2.Հողամասերի մեկնարկային գինը սահմանել դրանց կադաստրային արժեքի հարյուր տոկոսի չափով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԱԳՆ
2. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**